ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԴԻԶԱՅՆԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Նատալի Հարությունյան
Մեդիա նախաձեռնությունների կենտրոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

- Ծանոթացնել փաստաթղթերի դիզայնի հիմունքներին և ժամանակակից մոտեցումներին
- Սովորեցնել կարդալ և վերլուծել ձևավորման հիմքում դրված գաղափարը, կառուցվածքը, մոտեցումները, ոճը, օգտագործվող գործիքներն ու էլեմենտները
- Զարգացնել փաստաթղթերի ձևավորման կարողություններ
- Սովորեցնել մշակել լուսանկարներ ու պատկերներ՝ Adobe Photoshop համակարգչային ծրագրի միջոցով

Ինչպե՞ս կարողանալ գնահատել դիզայնի գործը, չլինելով դիզայներ

- Ինչու՞ իմ ուշադրությունը գրավեց:
- Ի՞նչն եմ առաջինը տեսնում: Ինչու՞:
- Ի՞նչ message էին ուզում փոխանցել:
- Ինձ հասավ, թե չէ՞:
- Արդյո՞ք հերթականությամբ է արտահայտված:
- Ի՞նչ բալանսի օգնությամբ է ստեղծված:
- Ի՞նչ եմ զգում նայելիս (էսթետիկ)
- Ի՞նչ եմ զգում նայելիս, արդյո՞ք համահունչ է իմ պատկերացմանը, նույն գաղափարին:
- Ինչու՞ եմ կարծում, որ սիրուն է կամ սիրուն չէ:
- Ի՞նչ նպատակի է ծառայում դիզայնը: Ի՞նչ են ուզում քեզ անել:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մասնակիցները

- կծանոթանան փաստաթղթերի դիզայնի հիմունքներին և ժամանակակից մոտեցումներին
- կուսումնասիրեն դիզայնի 7 սկզբունք և կգնահատեն դիզայնի արդյունավետությունն ու որակը՝ առաջնորդվելով այդ սկզբունքներով
- կսովորեն վերլուծել ձևավորման ցանկացած օրինակ՝ լինի դա փաստաթուղթ, պաստառ, հրավիրատոմս, լոգո և այլն, դիզայնի արդյունավետության ու գրագիտության տեսանկյուններից
- կկարողանան ավելի տեղեկացված ու պրոֆեսիոնալ աշխատել դիզայներների հետ՝ լավագույն արդյունքին հասնելու համար
- կզարգացնեն փաստաթղթային ձևավորման իրենց կարողությունները՝ անկախ առկա մակարդակից
- ձեռք կբերեն Adobe Photoshop ծրագրով պատկերների մշակման տարրական հմտություններ
- կհարստացնեն դիզայնի ոլորտի վերաբերյալ իրենց գիտելիքների պաշարը

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մասնակիցների քանակը՝ 10-15

Տևողությունը՝ 4 ժամ

Անհրաժեշտ պարագաները՝ համակարգիչներ (առնվազն՝ 1 համակարգիչ 2 մասնակցի համար), պրոյեկտոր, ինտերնետ, ֆլիպ չարթ, մարկեր

Սրահը՝ հարմար համակարգչով աշխատելու, պրոյեկտորով ցուցադրությունների համար (գույները, որակը կարևոր են)

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Վերլուծական

Ինտերակտիվ

Համագործակցային

Թիմային

Գործնական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դասընթացի բովանդակությունը կարող է մատուցվել ինչպես ամբողջությամբ, այնպես էլ՝ առանձին բաժիններով:

Մոդուլ 1. Դիզայնի հիմունքները, դիզայնի 7 սկզբունք

Մոդուլ 2. Դիզայնի վերլուծում ու գնահատում

Մոդուլ 3. Լուսանկարների և պատկերների մշակում Adobe Photoshop ծրագրով

Մոդուլ 4. Փաստաթղթերի ձևավորում՝ վարպետանոց

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

(նախատեսված ժամանակը՝ 4 ժամ)

	Բովանդակություն	Ժամանակ	Մեթոդ	Ռեսուրսներ
1	Ծանոթություն	10ր	Ինտերակտիվ վարժանք (Մասնակիցներին առաջարկվում է դիտել դիզայնի լավ և վատ օրինակներ և բլից գնահատել դրանք)	Պրոյեկտոր
2	Ինչ է դիզայնը, «ընթերցողի մագնիտը»	10ր	Պրեզենտացիա, քննարկում	Պրոյեկտոր
3	Դիզայնի 7 սկզբունք	50ր	Պրեզենտացիա, օրինակների ցուցադրություն և քննարկում	Պրոյեկտոր
4	Ինչպես վերլուծել և գնահատել դիզայնը	15ր	Պրեզենտացիա, օրինակների վերլուծություն	Պրոյեկտոր
5	Ընդմիջում	15ր		

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

	Բովանդակություն	Ժամանակ	Մեթոդ	Ռեսուրսներ
6	Adobe Photoshop ծրագրով նկարների և պատկերների մշակման հիմունքներ	60ր	Գործնական աշխատանք (Դասընթացավարը մշակում է պատկերները Photoshop ծրագրով և քայլ առ քայլ սովորեցնում՝ ինչպես դա անել; մասնակիցները հետևում են գործընթացին պրոյեկտորով և կրկնում գործողություններն իրենց համակարգիչներում)	Համակարգիչներ մասնակիցների համար (մեկական յուրաքանչյուր մասնակցի համար); ինտերնետ; Adobe Photoshop ծրագիր; պրոյետոր; ինտերնետ
7	Ընդմիջում	15ր		
8	Փաստաթղթային դիզայն՝ վարպետանոց	45ր	Գործնական աշխատանք (Մասնակիցները անհատական կամ թիմերով ձևավորում են հրավիրատոմսեր; առաջադրանքը կատարելու համար նրանց ուղարկվում են էլեկտրոնային նյութեր)	Համակարգիչներ մասնակիցների համար (առնվազն 1 համակարգիչ 2 անձի համար); ինտերնետ; Adobe Photoshop, Microsoft Word կամ Libre Office ծրագրեր
9	Մասնակիցների աշխատանքների դիտում և վերլուծություն	30ր	Քննարկում, վերլուծություն	Պրեզենտացիա

Նատալի Հարությունյան

Մեդիա նախաձեռնությունների կենտրոն
Մուլտիմեդիա արտադրության ղեկավար, դիզայներ

Արշակունյաց 3, 3-րդ հարկ
Հեռ. 010 583620
Էլ. փոստ՝ nharutyunyan@mediainitiatives.am
www.mediainitiatives.am